Արձանագրություն N 3

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

09.10.2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովը նախագահող Արմեն Կուլախսզյանը, անդամ՝ Հայկ Թադևոսյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ

Օրակարգ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:
2. «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատում և 1-ին և 2-րդ կետերի հիման վրա ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
4. Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

1. **<u>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:</u>**

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը 03.10.2018թ. հարցում ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08»

ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: 2018թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվեց եզրակացությունը (կցվում է), համաձայն որի հանձնաժողովը որոշեց «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

2. **<u>Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ</u>**

- «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ն ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնահատման արդյունքները համարել բավարար և «Հոթել Աղվերան» ՓԲԸ -ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ – 0:

3. **<u>Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:</u>**

Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

4. **<u>Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովը նախագահող Ա. Կուլախսզյանն առաջարկեց սահմանված կարգով պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին: Հանձնաժողովը միաձայն ընդունեց Ա. Կուլախսզյանի առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Կուլախսզյան

անդամներ՝ _____ Հ. Թադևոսյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան